

Մ Ա Ս Ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց Ը

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՉԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2010 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության գործունեության ծրագրի դրույթները և դրա իրականացումն ապահովող միջոցառումները, 2010 թվականին ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հիմնականում միտված է լինելու շարունակել հակաճգնաժամային քաղաքականության հետևողական իրականացմանը և ապահովել հետճգնաժամային կայուն զարգացման հիմքեր՝ միաժամանակ իրականացնելով նաև զարգացմանն ուղղված առաջնահերթ բարեփոխումները:

ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը սկսեց ստիճանաբար ներգործել դեռևս 2008թ-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից: Հետևաբար ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ հակաճգնաժամային ծրագրի մշակմանը, որը ՀՀ կառավարությունը ներկայացրել է ՀՀ ազգային ժողովին 2008թ-ի նոյեմբերի 12-ին: ՀՀ կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումները միտված էին մեղմելու ճգնաժամի հետևանքով առաջացած և տնտեսության առջև կանգնած ռիսկերը, պայմանավորված.

- մասնավոր ուղղակի ներդրումների կրճատմամբ և հետաձգմամբ
- մասնավոր տրանսֆերտների կրճատմամբ
- հանքահումքային արդյունաբերության ծավալների ժամանակավոր կրճատմամբ
- շինարարության ոլորտում որոշ ներդրումային ծրագրերի հետաձգմամբ և ներդրումների կրճատմամբ:

Ուստի ճգնաժամի հաղթահարման նպատակով ՀՀ կառավարության մշակած հակաճգնաժամային ծրագրի հիմնական նպատակներն էին.

1. մակրոտնտեսական կայունության ապահովումը,
2. ֆինանսական հատվածի կայունության ապահովումը,
3. տնտեսական աճի ապահովման հասար լրացուցիչ խթանների բացահայտումը և ներդրումը:

Դրանց հասնելու հիմնական ուղղությունները հետևյալն էին.

- գործարար միջավայրի բարելավումը՝ այդ թվում հարկային վարչարարության դաշտի պարզեցում և փոքր բիզնեսի համար վարչարարության հետ կապված ծախսերի էական կրճատում,
- գործարարությանը ժամանակավոր աջակցության տրամադրում՝ այդ թվում ուղղակի վարկավորման, երաշխիքների տրամադրման և կապիտալում մասնակցության,
- ՓՄՁ-ի վարկավորման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,
- ենթակառուցվածքներին ուղղված լայնածավալ ծրագրերի իրականացումը, և այդ շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծումը
- սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման և պետության կողմից ստանձնած սոցիալական պարտավորությունների կատարման առաջնահերթությունը,

2009թ. ՀՀ կառավարությունը վերոնշյալ ուղղություններով վարել է հստակ նպատակաուղղված քաղաքականություն միևնույն ժամանակ պետական պակասուրդի հաշվին մեծածավալ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներարկել տնտեսության մեջ: Այսինքն, տնտեսության անկմանը հակազդելու համար կառավարությունն ընդլայնել է թե ամբողջական պահանջարկը՝ մեծացնելով պետական սպառման և ներդրումների կշիռը ՀՆԱ-ում և թե ամբողջական առաջարկը՝ օժանդակելով տարբեր մակարդակներում գործարարությանը: Ընդ որում գուգահեռաբար կառավարությունը շարունակել է իրագործել տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումների և տնտեսության մեջ արդյունավետ խթանների համակարգի ստեղծմանն ուղղված ծրագրերի իրագործումը: Այս գործընթացը ծրագրվում է հետևողական իրագործել նաև 2010թ-ին, որպես հակաճգնաժամային քաղաքականության տրամաբանական շարունակություն և հետճգնաժամային աճի ապահովման համար կայուն հիմքերի ստեղծում:

Տնտեսական զարգացում

Երկրի հեռանկարային տնտեսական զարգացման նոր ուղղությունների ձևավորման, տնտեսական աճ ապահովելու, մրցունակ, արտահանման կողմնորոշում ունեցող և ներքին ռեսուրսների հիման վրա գործող ճյուղերի գերակշռության ապահովման, բնակչության զբաղվածության և բարեկեցության մակարդակների շարունակական բարձրացման և աղքատության մակարդակի նվազեցման նպատակով 2010թ իրականացվող առաջնահերթ միջոցառումները կհանդիսանան՝

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղ-

դելով պետական-մասնավոր գործընկերության և կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանն ու վարչարարական խոչընդոտների վերացմանը:

Պարբերաբար կանցկացվեն տնտեսական, ներդրումային և գործարար համաժողովներ, որոնց հիմնական նպատակն է ընդլայնել և խորացնել տնտեսական համագործակցությունը Հայաստանի և մյուս երկրների միջև՝ հասցնելով այն որակական նոր մակարդակի: 2010 թվականին ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում կշարունակի մնալ ՀՀ առևտրային ներկայացուցիչների ինստիտուտի ընդլայնումը, սփյուռքահայ ներդրողների ներդրումների ներգրավման և դրանց արտադրանքի արտահանման խթանումը, ավելի նպատակային գործարար կապերի ստեղծումը:

«Բիզնես միջավայրի «գերազանցության կենտրոն» համազգային մախազժի շրջանակներում կշարունակվեն աշխատանքները Հայաստանը տարածաշրջանում գործարար և ներդրումային միջավայրի «գերազանցության կենտրոն» դարձնելու ուղղությամբ: Մասնավորապես, կշարունակվի համագործակցությունը Համաշխարհային Բանկի Խմբի բազմադոնոր Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայության հետ: 2011թ դասակարգման մեջ Հայաստանի դիրքը էականորեն բարելավելու նպատակով կշարունակվեն «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների» ծրագրի իրականացման աշխատանքները՝ գործարար միջավայրում բացահայտված խոչընդոտների վերացման ուղղությամբ: Ծրագրում ներառված միջոցառումների իրականացումը կնպաստի գործարար միջավայրի բարելավմանն ուղղված հետևողական երկխոսության և փոխհամաձայնեցված միջոցառումների իրականացմանը, ներդրողների համար կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և պետական մարմինների ու մասնավոր ընկերությունների միջև համագործակցության խորացմանը:

Կշարունակվեն աշխատանքները կորպորատիվ կառավարման մշակույթի ներդրման ուղղությամբ, ինչը կբարձրացնի գործադիր մարմինների պատասխանատվությունն ու փոքր բաժնետերերի պաշտպանվածությունը:

Արտաքին առևտրի ոլորտում իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն ՀՀ կառավարության կողմից որդեգրված արտաքին առևտրի ազատական սկզբունքի պահպանմանը, ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը, միջազգային շուկայում հայրենական ապրանքների մրցունակության բարձրացման ապահովմանը, գործընկեր պետություններ ապրանքների ներմուծման ժամանակ սակագնային և ոչ սակագնային արգելքների նվազեցմանը՝ մասնավորապես եվրոպական ստանդարտներին համապատասխան հավատարմագրված համակարգի ներդրմանը, Եվրամիության հետ ազատ առևտրի ռեժիմի հաստատման հետ կապված միջոցառումների իրականացմանը, օտարերկրյա պետություններում հայրենական արտադրողի շահերի առավել պաշտպանությանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, արտահանման ծավալների ավելացմանը, ՀՀ համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման համար բարենպաստ պայմանների ապահովմանը:

Ներդրումային ոլորտում գործընկեր երկրների հետ բարենպաստ իրավապայմանագրային դաշտ ձևավորելու նպատակով կշարունակվի ՀՀ կառավարության և այդ երկրների միջև «Ներ-

դրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» միջազգային Համաձայնագրերի կնքման գործընթացը:

Առևտրի և ծառայությունների ոլորտում 2010թ սպառողական շուկայի կանոնակարգման միջոցառումներն ուղղված կլինեն սպառողական շուկայում հավասար մրցակցության դաշտի ապահովմանը, միջազգային պահանջներին համապատասխանող սպառողների շահերի պաշտպանության համակարգի ձևավորմանը, գործարար էթիկայի կանոնների ու ստանդարտների ներդրմանն ուղղված քաղաքականության իրականացմանը, ոլորտում հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովմանը, տեղեկացված հասարակության ձևավորմանը, կորպորատիվ հսկողության կանոնների ստեղծման համակարգի ձևավորմանը:

Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտներում նախատեսվող միջոցառումները հիմնականում նպատակաուղղված են լինելու սպառողների կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի համար անվտանգ արտադրանքի ներմուծման, արտադրման և ծառայությունների մատուցման ապահովմանը, ՀՀ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կորավորման համակարգի միջազգային նորմերին ներդաշնակեցմանը:

Տնտեսության զարգացման տրամաբանությունն ուղղված է լինելու նորարարական մտեցումների կիրառման ապահովմանը և խթանմանը, ինչպես նաև գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը:

Կշարունակվեն աշխատանքները սպառողական շուկայում արտադրանքի և ծառայությունների որակի միջազգային ISO և Եվրոպական CEN ստանդարտների ուղղակի կիրառման և սպառողների շահերի պաշտպանության պետական վերահսկողության համակարգի կատարելագործման ուղղությամբ:

Հավատարմագրման ոլորտում 2010թ իրականացվող միջոցառումները նպատակաուղղված կլինեն հավատարմագրման համակարգի արդիականացմանը, ինչպես նաև Եվրոպական, միջազգային, տարածաշրջանային հավատարմագրման կազմակերպություններին անդամակցությանը, որոնք նախադրյալներ կստեղծեն՝ գնահատման միջոցով, հավատարմագրման միջազգային/Եվրոպական կազմակերպությունների կողմից հավատարմագրման մարմնի ճանաչման գործընթացի իրականացման, բազմակողմանի համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցության, հավատարմագրման արդյունքների փոխճանաչման, առևտրի հավասար պայմանների ստեղծման համար և կրացառեն նույն ապրանքի կրկնակի փորձարկման և սերտիֆիկացման անհրաժեշտությունը:

Մտավոր սեփականության ոլորտում 2010թ կշարունակվի բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործումը: Մասնավորապես, ապրանքների և ծառայությունների իրացման հետ կապված շուկայական տնտեսավարման մշակույթի և բարեխիղճ մրցակցության ձևավորման, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, աշխարհագրական նշումների և ֆիրմային անվանումների իրավական պահպանության մասով կկիրառվեն «Ապրանքային նշանների մասին» և «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ նոր օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը: Նշված իրավական ակտերի ընդունման

և դրանց համապատասխան գործառնությունների կատարման նպատակով կշարունակվեն աշխատանքները բնագավառի մասնագետների հատուկ մասնագիտական պատրաստվածության և կարունակական կատարելագործման ուղղությամբ:

Գյուտարարներին ցուցաբերվող աջակցությունն ընդլայնելու նպատակով կիրականացվեն խորհրդատվական-ուսուցողական մի շարք ծրագրեր: Նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ստեղծումն ու օգտագործումը խրախուսելու նպատակով կշարունակվեն աշխատանքները գիտության և տեխնիկայի նվաճումներին վերաբերող տեղեկատվությունը գյուտարարների և փոքր ու միջին ձեռնարկությունների համար մատչելի դարձնելու ուղղությամբ:

Մտավոր սեփականությունը քաղաքացիական շրջանառության մեջ մտցնելու լիարժեք միջավայրի ձևավորման նպատակով 2010թ առաջին կիսամյակում գործողության մեջ կդրվի մտավոր սեփականության գնահատման համակարգը, որը զգալիորեն կնպաստի մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցմանը և լիցենզավորմանը:

Մտավոր սեփականության բնագավառին վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում կշարունակվեն աշխատանքները արդյունաբերական սեփականության օբյեկտների համապատասխան տվյալների բազաների կատարելագործման ուղղությամբ:

Հեղինակային իրավունքի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված կլինի ազգային մշակույթի և արվեստի զարգացման խթանմանը, որի համար կշարունակվի հետևողական պայքարը ներկայումս բացահայտ բնույթ կրող խախտումների դեմ:

Տնտեսության ճյուղերի զարգացումը

Արդյունաբերական քաղաքականությունը նպատակաուղղված կլինի Հայաստանի՝ որպես արդյունաբերական երկրի կարգավիճակի ձեռք բերմանը, տնտեսական աճի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշռի ավելացմանը, գիտության և նորարարության արդյունքների ներդրման աջակցության միջոցով արտադրանքի վերամշակման խորացմանը, քիմիական, հանքահումքային բնագավառի ընկերությունների և գիտակրթական համակարգի գործուն համագործակցության ձևավորմանը, հարաբերական մրցակցային առավելություններ, արտահանման կողմնորոշում ունեցող և ներքին շուկայում օգտագործող արտադրությունների զարգացմանը, թեթև արդյունաբերության ոլորտի զարգացման մոտեցումների վերանայմանը:

Ռեսուրսատար զարգացման փուլից աստիճանաբար անցում կկատարվի ներդրումային զարգացման փուլ, որի ընթացքում նորագույն և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման նպատակով ռեսուրսներ կներգրավվեն, ինչը թույլ կտա ապահովել կայուն և դիվերսիֆիկացված արտադրություն:

Թեթև արդյունաբերության բնագավառում առկա ներուժը կօգտագործվի պետական-մասնավոր հատվածի համագործակցության մեխանիզմների կիրառման միջոցով՝ խթանելով արտաքին շուկա դուրս գալու հնարավորությունները, չանտեսելով ներքին շուկայի ընդլայնման անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ ապահովելով բարձր մրցակցություն ներմուծվող ապրանքների նկատմամբ:

Քիմիական արդյունաբերության ոլորտում կիրականացվեն հանրապետության քիմիական արդյունաբերության ներկա վիճակի վերլուծություն, միջազգային միտումների ուսումնասիրություն և հաշվի առնելով հանրապետության ներուժը, կձևավորվի ոլորտի նկարագիրը և շուկայի այն սեգմենտները, որոնցում Հայաստանը կարող է տեղ գրավել և լինել մրցունակ:

Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացումը դիտարկելով ոչ միայն որպես առանձին ճյուղ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունը պահպանելու գործիք՝ ՀՀ կառավարությունը ջանքեր կգործադրի Հայաստանը դարձնելու առաջատար երկիր ընտրված թիրախային SS շուկաներում, ինչպես նաև զարգացած և առաջադեմ տեղեկատվական հասարակություն ու գիտելիքների վրա հիմնված տնտեսություն ունենալու ուղղությամբ: ՀՀ կառավարությունը միջոցներ կձեռնարկի, որպեսզի Հայաստանը արտապատվիրվող ցածր արժեք ունեցող SS ծառայություններ մատուցող երկրից դառնա բարձր արժեքով առաջատար SS արտադրանք և ծառայություններ տրամադրող երկիր, ունենա հասարակություն, որը ձևավորված է միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող տեխնիկական կրթության, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքի և համակարգչային գրագիտության հիման վրա:

2010թ ընթացքում կշարունակվեն ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու մասին հայեցակարգով սահմանված աշխատանքները՝ նպատակ ունենալով Գյումրի քաղաքը դարձնել ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներ ունեցող կենտրոն, որտեղ ներկայացված կլինեն բարձր տեխնոլոգիաներ կիրառող ձեռնարկությունները, խոշոր կրթօջախներն ու գիտահետազոտական կենտրոնները:

ՀՀ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և տեղեկատվական հասարակության ձևավորման նպատակով 2010թ միջոցառումներ կիրականացվեն ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման ուղղությամբ:

Հեռուստա- և ռադիո հեռարձակման թվայնացման հայեցակարգի և միջոցառումների ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի և համապատասխան միջոցառումների միջնաժամկետ ծրագրի հաստատում, ինչպես նաև անհրաժեշտ օրենսդրական դաշտի և համաֆինանսավորման մոդելների ձևավորում:

2010թ նախատեսվում է ՀՀ քաղաքացիների նույնականացման քարտերի (ID Card) փորձնական ներդրում, ինչպես նաև պետական-մասնավոր գործընկերության սկզբունքների կիրառմամբ ազգային լայնաշերտ ցանցի ձևավորում:

ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում կլինի Ա.Ի Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտի բազայի վրա Միջուկային ֆիզիկայի ազգային կենտրոնի ստեղծումը, ինչպես նաև Cyclone-30 իզոտոպների արտադրության համալիրի տեղադրման և ՀՀ միջուկային բժշկության կենտրոնի հիմնմանն աջակցելու ծրագիրը, որը թույլ կտա տիրապետել ախտորոշման և բուժման առավել արդիական մեթոդների, արմատապես բարելավել բնակչության բժշկական

սպասարկման մակարդակը, Հայաստանը դարձնել բժշկական նպատակներով օգտագործվող ռադիոնուկլիդներ արտահանող երկիր:

Տարածքային տնտեսական զարգացում

Տարածքային տնտեսական զարգացման ոլորտում պետական քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի զարգացման անհամաչափությունների համահարթեցմանը՝ մարզերում ենթակառուցվածքների և բարձրարժեք ծառայությունների մատուցման միջոցով:

2010թ ընթացքում կիրականացվեն ՀՀ տարածքներում զբոսաշրջության, արհեստագործության և ծառայությունների ոլորտների զարգացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև ձեռագործ գորգագործության ոլորտի պետական աջակցության նպատակային ծրագրեր, որոնք կնպաստեն ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծմանը և ինքնագրավածության մակարդակի բարձրացմանը:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ 2010թ ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության հիմնական ուղղություններն են լինելու տնտեսության ներկա մակարդակին համահունչ ՓՄՁ դասակարգման վերանայումը, պետական աջակցության և միջազգային/ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ներքո իրականացվող ծրագրերի ընդլայնումը, սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում սկսնակ գործարարներին միկրովարկերի տրամադրման գործընթացի աշխուժացումը: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ՓՄՁ պետական աջակցության ձևերին զուգահեռ կշարունակվեն կիրառվել նաև աջակցության ճկուն և ուղղակի տարբերակներ՝ նպատակ ունենալով ստեղծել նոր աշխատատեղեր, խթանել ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքով, ավելացնել արտահանումը, ընդլայնել տեղական հումքի օգտագործումը, խթանել ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը:

Չբոսաշրջության ոլորտում զարգացման առաջնային քայլերն ուղղված կլինեն մարքեթինգային քաղաքականության իրականացմանը՝ գովազդատեղեկատվական ապահովման համակարգի շարունակական զարգացման և կատարելագործման միջոցով, ինչի շրջանակներում կշարունակվի համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ և բարենպաստ երկրի նկարագրի ամրապնդումը, միջազգային համագործակցության ակտիվացումը, զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների կայուն որակի ապահովումը, զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացումը և ՀՀ մարզերում զբոսաշրջության զարգացումը:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կշարունակվի ակտիվ պետական տարածքային քաղաքականության իրագործման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության հետագա բարձրացման գործընթացը:

2010թ իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան.

-տարածքային անհամաչափ զարգացման համահարթեցման, մայրաքաղաքի և այլ քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև տնտեսական ակտիվության մեծ խզվածության կրճատման

նպատակով՝ Հայաստանի մի շարք քաղաքների զարգացման տեմպերի արագացման և ներդրումային ակտիվության խրախուսման նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը,

- մարզերում հանրային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացումը,

- ՀՀ կառավարության արտագնա նիստերի անցկացման միջոցով մարզերի (տարածաշրջանների, համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ հնարավորությունների վերհանումը և դրանց իրագործմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը,

- պետական բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով մարզային (համայնքային) ենթակառուցվածքների գնահատումը, դրանց կարգաբերումն ու զարգացումը,

- մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգի հիման վրա յուրաքանչյուր մարզի համար զարգացման ծրագրի մշակումն ու հաստատումը, ինչը հնարավորություն կտա արտացոլել յուրաքանչյուր մարզին բնորոշ հիմնախնդիրներն ու զարգացման առանձնահատկությունները, կնպաստի տարածքային զարգացման պլանավորման կատարելագործմանը և տարբեր մարզերի զարգացման ծրագրերը կդարձնի համադրելի:

- *Տեղական ինքնակառավարման* համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի բարձրացման նպատակով՝ հստակորեն կսահմանազատվեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, կմշակվեն համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության գործուն մեխանիզմների ներդրումն ապահովող օրենսդրական նախագծեր և կապահովվի դրանց տեղայնացումը ՀՀ համայնքներում:

Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների հստակեցման և սահմանման միջոցով կիրականացվի Երևանը որպես մեկ համայնք կայացմանն ուղղված գործուն աշխատանքներ:

Վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում կիրականացվեն միջհամայնքային միավորումների ստեղծմանը և համայնքների խոշորացմանն ուղղված աշխատանքներ: Կմշակվեն ՀՀ համայնքների խոշորացման հայեցակարգից բխող օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև մի շարք մարզերի համար հետագա զարգացման գործողությունների ծրագրեր:

ՏԻՄ-երի մի շարք պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար կմշակվեն համայնքներին ֆինանսական միջոցների տրամադրման կարգեր, կսահմանվեն նորմատիվներ ու չափորոշիչներ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակը:

Համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության բարձրացման և տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բևեռացումը մեղմելու նպատակով կներդրվի ֆինանսական համահարթեցման նոր համակարգ:

Համայնքներում կիրականացվի ծրագրային բյուջետավորման ներդրման, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրամիության երկրների և միջ-

ազգային կազմակերպությունների ու բանկային կառույցների հետ համագործակցության միջոցով համայնքներում դրամաշնորհային ու վարկային ծրագրերի ներգրավման աշխատանքներ:

Աշխատանքներ կիրականացվեն նաև համայնքային բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավաքագրման մեխանիզմների կատարելագործման և տեղական նոր հարկատեսակների ներմուծման ուղղությամբ:

Բոլոր համայնքների համար կստեղծվի տեղեկատվական կենտրոնացված շտեմարան և էլեկտրոնային կառավարման համակարգերի անխափան շահագործումն ապահովող սպասարկման ծառայություններ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել մարզերի և համայնքների կառավարման համակարգի արդյունավետությունը:

Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման ոլորտում 2010թ իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան.

- 2007թ դեկտեմբերի 6-ի թիվ 1598-Ն որոշմամբ հաստատված թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային ծրագրով և դրա իրականացման ժամանակացույցով սահմանված միջոցառումներն իրագործելու ուղղությամբ աշխատանքների իրականացումը,

- օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների և սփյուռքահայերի կողմից էլեկտրոնային կապի հաղորդուղիներով ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների հետ անմիջականորեն կապվելու համակարգի մշակումը և ներդրումը,

- օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների Հայաստան վերադարձի խթանումը,

- Հայաստան օտարերկրյա քաղաքացիների մուտքի, նրանց կացության կարգավիճակների և աշխատանքային գործունեության կանոնակարգումը,

- օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց մարդասիրական նկատառումներով ՀՀ կողմից տրամադրվող պաշտպանության համակարգի կատարելագործման նպատակով՝ ՀՀ-ում ապաստանի տրամադրման համակարգի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին,

- փախստականների բնակարանային հիմնախնդրի լուծման նպատակով՝ առավել կարիքավոր փախստականներին բնակարանով ապահովման ծրագրի մշակումը և ներդրումը:

Արխիվային փաստաթղթերի մշտական պահպանության և անընդհատ համալրման նպատակով 2010թ իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառում կհանդիսանա՝ այլ պետությունների հետ համագործակցության, նրանց տարածքում գտնվող հայկական պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների պահպանության նպատակով՝ ԱՊՀ և այլ երկրների հետ արխիվագիտական կապերի ամրապնդումը, արխիվագիտության բնագավառում արդիական փորձի փոխանակումը:

Գյուղատնտեսություն

ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2010թ կնպատակաուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվի ագրոպարենային ոլորտում ֆինանսատնտեսական ճգնա-

ժամի հետևանքների մեղմման, հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հիմնական պարենամթերքների ինքնաբավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար:

Հանրապետությունում հողօգտագործողներին հասցեական պետական աջակցության միջոցով աշխատանքներ կիրականացվեն գյուղական տարածքների անհամամասնությունների հաղթահարման և ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացման, սերմնաբուծության և տոհմային գործի համակարգի ամրապնդման և զարգացման, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարի, ինչպես նաև հողերի մելիորատիվ վիճակի բարելավման ուղղությամբ:

2010թ նախատեսվում է խորացնել ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

-պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների ներդաշնակեցում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի ձևավորում,

-տեղական արտադրողների շահերի պաշտպանության քաղաքականության իրականացման միջոցով տնտեսավարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,

-գյուղատնտեսության սպասարկման և արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,

-գիտա-կրթական, տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի կարողությունների ուժեղացում, համակարգի բարելավման մեխանիզմների ներդրում,

-ագրարային արտադրական գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման աջակցություն:

Ագրոպարենային համակարգի զարգացման 2010թ քաղաքականության մեջ, որպես գլխավոր նպատակ կմնա երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ, հետևողական աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսության վարկավորման բնագավառում առկա խոչընդոտների վերացման, մասնավորապես, առավել անբարենպաստ պայմաններում տնտեսավարող սուբյեկտների վարկային տոկոսադրույքի սուբսիդավորման, օրենսդրական հիմքերի բարելավման և նպատակային ծրագրերի համաֆինանսավորման միջոցով ագրարային ոլորտում տարբեր տնտեսվարման ձևերի զարգացման ուղղությամբ:

Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակելու է նպատակաուղղվել ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ և շրջակա միջավայրի պահպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու՝ միջուկային էներգետիկ հզորությունների ստեղծումը, սեփական վերականգնվող էներգապաշարների

առաջնահերթ իրացումը, էներգապաշարների և դրանց ներկրման ուղիների տարատեսականացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

2010թ նախատեսվում են հանրապետության տարածաշրջանային ինտեգրացման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները.

-մասնավոր կապիտալի ներգրավմամբ՝ ՀԷԿ-երի և հողմաէլեկտրակայանների կառուցման աշխատանքների իրականացում,

-Արաքս գետի վրա Մեղրի ՀԷԿ-ի կառուցման աշխատանքների կազմակերպում,

-Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման նպատակով երրորդ օղային գծի կառուցման աշխատանքների իրականացում:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության «ԳԱԶՊՐՈՍ» ընկերության միջև կնքված համաձայնագրով 2010թ կշարունակվեն և կավարտվեն Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության աշխատանքները:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ Եվրամիության համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման կիրառմամբ:

Իրենց աշխատանքները կշարունակեն «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի» հիմնադրամը՝ իր գործունեության նպատակակետում ունենալով նաև հանրային նշանակության շենքերում էներգախնայողության միջոցառումների իրականացման խթանումը, ինչպես նաև Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից նոր ֆինանսավորում ստացած «Փոքր ՀԷԿ-երի արդիականացման հիմնադրամ» ծրագիրը:

Ջերմամատակարարման բնագավառում 2010թ իրականացվող աշխատանքների արդյունքում իրենց զարգացումը կստանան ջերմամատակարարման ծառայությունների առևտրայնացման ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորիչ դաշտի ձևավորման, ջերմամատակարարման վերականգնման տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված ու մատչելի սխեմաների ընտրության հետ կապված խնդիրները: Այս աշխատանքների հաջող ընթացքին կնպաստեն դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող համապատասխան ծրագրերը:

Գազամատակարարման համակարգի վերականգնման ու զարգացման ուղղությամբ ավարտվելու են հանրապետության բնակչության գազամատակարարման վերականգնման, գազափոխադրման ու գազաբաշխման համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի արդիականացման աշխատանքները: Կշարունակվեն նաև գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանը և շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Քիմիայի բնագավառում 2010թ իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրներն են լինելու.

- տեղակայված հզորությունների ամբողջական վերագործարկումը և վերազինումը,
- «Քիմպրոմ» և «Նաիրիտ» ընկերությունների բազայի վրա փոքր քիմիայի զարգացումը,
- հիմնականում տեղական հումքի վրա աշխատող նոր քիմիական հզորությունների ստեղծումը,
- ժամանակակից պահանջներից բխող բնապահպանական խնդիրների լուծումը:

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2010թ իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղվելու է հետևյալ հիմնախնդիրների լուծմանը.

- ընդերքի տնտեսական ներուժի շարունակական բացահայտմանը,
- ընդերքօգտագործման ոլորտի ռազմավարության մշակմանը և օրենսդրական դաշտի կատարելագործմանը,
- ընդերքի պաշարների վերարտադրության, ողջամիտ, արդյունավետ և համալիր օգտագործման ապահովմանն ուղղված միջոցառումների մշակմանը,
- ընդերքի պաշարների արդյունահանման պետական երկրաբանական հսկողության իրականացմանն ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակմանն ու կիրառմանը,
- հանրապետական երկրաբանական ֆոնդի, ընդերքի պաշարների մասին տվյալների կադաստրների՝ միջազգային չափանիշներին համապատասխան ձևավորմանն ու վարմանը, տեղեկությունների թափանցիկության ապահովմանը,
- հաստատված օգտակար հանածոների պաշարներով հանքավայրերի տարեկան հաշվեկշիռների կազմմանը,
- օգտակար հանածոների հայտնաբերման նպատակով երկրաբանական համալիր ուսումնասիրությունների իրականացման կազմակերպմանը,
- հետախուզված ընդերքի պաշարների տնտեսական գնահատման և հաստատման ապահովմանը:

Միջուկային անվտանգություն

Միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգությունը կարգավորող փաստաթղթերի և միջուկային կարգավորման պետական համակարգի զարգացումն ու կատարելագործումը 2010թ լինելու են կառավարության ուշադրության կենտրոնում:

Ոլորտում իրականացվող առաջնահերթ միջոցառումներն են հանդիսանալու.

-միջուկային օրենսդրության կատարելագործումը՝ հաշվի առնելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) և եվրոպական միության անվտանգության ստանդարտներն ու չափանիշները, ինչպես նաև զարգացած երկրների փորձի հիման վրա «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» նոր օրենքի, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, ստանդարտների մշակումը,

-կարգավորող մարմնի «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը,

-իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան,

-ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների վերահսկողական և տեսչական գործունեության կատարելագործումը,

-մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),

-միջուկային և ռադիոակտիվ անվտանգության վերաբերյալ տեղեկատվության համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,

-միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը,

-ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի գործունեության որակի ապահովման ծրագրի կատարելագործումը,

-ժամանակակից պահանջներին համապատասխանող վթարային կենտրոնի զարգացումը,

-միջազգային համագործակցության զարգացումը:

Կադրային, ֆինանսական և նյութական ապահովման կատարելագործման նպատակով, «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիայի և անվտանգության ստանդարտների պահանջների, ԱԷՄԳ փորձագիտական առաքելությունների և ՀՀ նախագահին կից Ատոմային Էներգետիկայի անվտանգության խորհրդի առաջարկությունների կատարման համար 2010թ նախատեսվում է՝ բարձրացնել տեսչական և մասնագիտական անձնակազմի աշխատավարձը՝ հասցնելով վերահսկվող օբյեկտների համապատասխան որակավորում ունեցող և պատասխանատվություն կրող աշխատողների աշխատավարձի չափին, բարելավել աշխատողների աշխատանքային պայմանները (ծառայողական անհրաժեշտ տարածքներ, գրասենյակային և համակարգչային տեխնիկա և այլն), ինչպես նաև գործունեության անկախության և միջուկային ու ճառագայթային անվտանգության հետազոտությունների իրականացման, բարձր որակավորմամբ կադրերով ապահովման համար, անհրաժեշտ ֆինանսական միջոցներով ապահովում:

Ջրային տնտեսություն

2010թ ջրային տնտեսության բնագավառում կարևորվելու են անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակականությունը, ինչպես նաև ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումները:

Խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ կլինեն՝ համակարգերում մասնավոր կառավարման ձևերի ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը, ջրային համակարգերի վերականգնմանն ու զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կազմակերպման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնաձախսածածկման ապահովումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2010թ ընթացքում շարունակվելու է ներդրումների իրականացումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի համակարգերի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը, ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքներ

րի փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիակա-
նացմանը:

Ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

-կազմակերպել մասնավոր կառավարման պայմանագրերով նախատեսված աշխատանքների
իրականացման, մոնիտորինգի և վերահսկման գործընթացները,

-ապահովել Երևան քաղաքի շարունակական ջրամատակարարման ծրագրի իրականացումը և
նպաստել «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք»
ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում ևս նմանատիպ գործընթացների աստիճանական
ակտիվացմանը և ջրամատակարարման տևողության ավելացմանը,

-Համաշխարհային բանկի, Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD), ԱՄՆ
Միջազգային զարգացման գործակալության, ֆրանսիական կառավարության, Ասիական բանկի և
այլ դոնորների հետ իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի
ներդրումային ծրագրերը,

2010թ ընթացքում նույնպես շարունակվելու է խմելու ջրի ոլորտի առևտրային և ոռոգման
համակարգերը շահագործող ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունը: Այն պայ-
մանավորված է նաև վերջնական սպառողների համար սուբսիդավորման հասցեագրված
քաղաքականության չհստակեցման հետ:

Տրանսպորտ

Տրանսպորտի բնագավառում 2010թ իրականացվելիք քաղաքականության հիմնական նպա-
տակը շարունակում է մնալ փոխադրումների իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող
ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործ-
մամբ, ինչպես նաև Հայաստան-Իրան երկաթուղու շինարարության իրականացմամբ: Այդ նպա-
տակին են ծառայելու 2010թ պետական բյուջեում ընդգրկված պետական նշանակության ավտո-
ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերը:

Համաշխարհային Բանկի ճանապարհների բարելավման 1-ին ծրագրով 2010թ կիրականաց-
վի նաև ճանապարհների ընտրված հատվածների վերականգնման և տեխնիկական հսկողության
աշխատանքներ:

Գյուղական համայնքները հիմնական ավտոմոբիլային ցանցի հետ կապելու նպատակով
Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվելու է նաև Գյուղական ճանապարհ-
ների վերականգնման ծրագիրը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2009թ օգոստոսի 6-ի թիվ 909-Ա որոշման պահանջների
կատարման ապահովման նպատակով կձեռնարկվեն միջոցներ՝ Հազարամյակի մարտահրավեր
համաձայնագրով նախատեսված Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի կատար-
ման ապահովման ուղղությամբ:

Կապի բնագավառ

2010թ ոլորտում կիրականացվի ՀՀ տարածքում գրանցված ռադիոկապի տարբեր ցանցերի
միաժամանակյա աշխատանքի ապահովման, շահագործվող ՌԷՄ-երի և ԲՀՍ-ների տեխնիկական
պարամետրերի փորձաքննության, կապի և ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում խորհրդատվա-

կան ծառայությունների մատուցման, Ռ-ԷՄ-երին հատկացվող անհրաժեշտ հաճախությունների (կապուղիների) համապատասխան մարմինների հետ համաձայնեցման և միջազգային իրավական պաշտպանության ապահովման, ռադիոխանգարումների և տեսչավորման արդյունքում ներկայացված տվյալների, չափումների արձանագրությունների, Ռ-ԷՄ-երի էլեկտրամագնիսական համատեղելիության փորձաքննություն և հաճախությունների օգտագործման հնարավորության անհրաժեշտ հաշվարկների կատարմանն ուղղված աշխատանքներ:

Ավիացիա

Ավիափոխադրումների շուկայի ընդլայնման նպատակով 2010թ ակտիվորեն շարունակվելու են քննարկումների և ուսումնասիրությունների իրականացման աշխատանքները, որը կնպաստի օդային փոխադրումների ծավալի աճին, ավիափոխադրումների աշխարհագրական ընդլայնմանը:

Ոլորտում կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

-ավիացիոն անվտանգության ապահովման կանոնակարգում և դրա նկատմամբ վերահսկողություն,

-օդանավերի թռիչքային պիտանիության գնահատում,

-օդային երթևեկության կազմակերպման ապահովման կանոնակարգում,

-օդանավակայանների (աերոդրոմների) սերտիֆիկացում և օդանավակայանների (աերոդրոմների), վերգետնյա սպասարկման տեխնիկական միջոցների շահագործման նկատմամբ վերահսկողություն,

-օդերևութաբանական, աերոնավիգացիոն տեղեկատվական, տեխնիկական և այլ վերգետնյա ծառայություններ մատուցող մարմինների նշանակում ու դրանց գործունեության վերահսկում,

-ՀՀ տարածքում պատահարների և միջադեպերի մասնագիտական քննություն, այլ պետությունում` ՀՀ գրանցված կամ ՀՀ շահագործողի կողմից շահագործվող օդանավի հետ կապված քննության մասնակցություն, ապահովության հարցերում առկա միտումների վերլուծություն և ավիացիոն գործունեություն իրականացնողներին, հետագա վթարների կանխարգելման նպատակով` համապատասխան տեղեկատվության մատուցում, ՀՀ տարածք թռիչքներ իրականացնող այլ պետությունների օդանավերի տեսչական ստուգումների անցկացում,

-ՀՀ ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի ներդրում և վարում,

-ՀՀ քաղաքացիական ավիացիայի բնագավառում որոնողական-փրկարարական աշխատանքների համակարգում,

-ավիացիոն մասնագետների վկայագրում և որակավորում,

-օդային փոխադրումների կարգավորում և լիցենզավորում:

Քաղաքաշինություն

Շինարարության ոլորտում 2010թ ընթացքում կարևորվելու է կրթական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակականությունը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսման, մշակութային կյանքի և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի էական բարձրացմանը:

2010թ «Բնակարանային շինարարություն» ծախսային ծրագրով Ռ-Դ-ի վարկային միջոցների հաշվին աղետի գոտում շարունակվելու են 2009թ սկսված` ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի

Մուշ-2 թաղամասի Մարմարաշենի 7-րդ, Մուշի 7-րդ փողոցներով պարփակված, Մուշի 5-րդ փողոցին հարակից տարածքների (1200 բնակարանների՝ այդ թվում՝ ավարտման ենթակա կիսակառույց շենքերի ավարտում), Անի թաղամասի Տրդատ ճարտարապետի փողոցին հարող տարածքների (400 բնակարանների) կառուցապատման, Ախուրյան գյուղում (182 բնակարանների) և Լոռու մարզի Սպիտակ քաղաքում (354 բնակարանների) երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանաշինության աշխատանքները:

2010թ բնակարանային ոլորտում նախատեսվում է իրականացնել Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

Արտակարգ իրավիճակներ

2010թ քաղաքացիական պաշտպանության համակարգում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

-քաղաքացիական պաշտպանության կազմակերպման իրավական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում միջազգային պահանջներին,

-ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայողների մասնագիտական և հատուկ պատրաստականության բարձրացում,

-բնակչության ուսուցում,

-դեկավար մարմինների նախապատրաստման ժամանակակից մեթոդների ներդրում,

-իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և առաջարկությունների նախապատրաստման համակարգի կատարելագործում,

-տարերային աղետներից և տեխնածին վթարներից բնակչության պաշտպանության ապահովում,

-արտակարգ իրավիճակների կանխարգելման, կանխման և հետևանքների վերացման միասնական քաղաքականության իրականացում,

-արտակարգ իրավիճակներ ծնող պատճառների բացահայտման, դրանց կանխման ու կանխարգելմանն ուղղված գործունեության նկատմամբ պետական վերահսկողական գործառնությունների ուժեղացում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տեսչական գործունեության իրականացման ինստիտուցիոնալ հնարավորությունների մեծացում,

-արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացում,

-մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության զարգացում և ժամանակակից մեթոդների ներդրում,

-հանրային իրազեկման համակարգի կատարելագործում և զարգացում,

-գիտատեխնիկական նվաճումների և նորագույն մոտեցումների ներդրում արտակարգ իրավիճակների կառավարման բնագավառում:

Արտաքին քաղաքականություն

ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտի հիմնական գերակա ուղղությունները՝ պահպանել են իրենց արդիականությունը ինչպես ընդհանուր արտաքին քաղաքական, այնպես էլ տարածաշրջանային քաղաքականության հարթություններում, մասնավորապես դրանք են.

-ակտիվ ներգրավվածություն միջազգային կազմակերպություններում,

- մասնակցություն համաշխարհային նշանակության գործընթացներին, մասնավորապես ահաբեկչության և կազմակերպված հանցագործության այլ ձևերի դեմ պայքարին,
- Ռուսաստանի հետ հատուկ ռազմավարական գործընկերության խորացում,
- ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության և համագործակցության զարգացում,
- Եվրոպական և ԱՊՀ կառույցներում Հայաստանի մասնակցության ակտիվացում,
- տարածաշրջանային կարևոր դերակատարների՝ Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Բրազիլիայի հետ հարաբերությունների զարգացում,
- անմիջական հարևանների՝ Իրանի հետ փոխհարաբերությունների հետագա զարգացում և ամրապնդում, Վրաստանի հետ ավանդական բարի դրացիական հարաբերությունների խթանում,
- Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորում,
- Արցախյան հիմնախնդրի խաղաղ և արդարացի հանգուցալուծում, ինչպես նաև տարածաշրջանային կայունության ամրապնդում և համագործակցության ծավալում:

ՀՀ արտաքին քաղաքականության գերակա խնդիրների ու նպատակների շրջագծում ներկա փուլում առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերել տնտեսական և քաղաքական բաղադրիչները, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտի խնդիրները:

Տնտեսական գործոնի ակտիվացման առաջնայնությունների հիմնական շեշտերը մնայուն են.

- արտաքին աշխարհին կապող տրանսպորտային, էներգակիրների տեղափոխման երթուղիների անխափան գործարկում, դրանց տարբերազատում (դիվերսիֆիկացում),
- արտաքին առևտրի համար նպաստավոր պայմանների ապահովում,
- հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնում և նվաճում,
- արտաքին ներդրումների ապահովում:

Եվրոպական ինտեգրացման ուղղությամբ շարունակվելու է հետևողականորեն իրականացվել ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կայացմանը, եվրոպական չափանիշներին դրանց համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումները, պետությունների Եվրոպական ընտանիքին լիարժեքորեն անդամակցելու ծրագրերը: Այս ամենին նոր երանգ են հաղորդելու Հայաստանի ակտիվ մասնակցությունն ու գործունեությունը ԵՄ «Նոր հարևանության» և 2009 թվականին սկիզբ առած «Արևելյան գործընկերության» ծրագրերը:

Հարավային Կովկասում տեղի ունեցող, ինչպես նաև համաշխարհային ճգնաժամով պայմանավորված զարգացումները պահանջում են լինել առավել հետևողական և նպատակադրված: Նշված իրողությունները նոր խնդիրներ են դնում ՀՀ արտաքին քաղաքականության առջև երկկողմ և բազմակողմ հարաբերությունների հարթություններում համարժեք և անհրաժեշտ քայլերի, դիրքորոշումների մշակման և գործնական իրականացման առումներով: Այս ամենով հանդերձ, կարևորվում են նաև աշխատանքները միջազգային կազմակերպություններում, քարոզչական և տեղեկատվական ոլորտներում:

Սփյուռք

Ոլորտի 2010թ առաջնահերթ խնդիր է համարվելու «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման» հայեցակարգի դրույթների իրականացումը և այդ բնագավառում քաղաքականության համակարգում: Գործակցության հիմքի երեք ռազմավարական խնդիրներն են.

- աջակցել հայկական Սփյուռքում հայապահպանության խնդիրների լուծմանը, օգնել ուժացման դեմ պայքարի գորացմանը՝ դպրոցի, ընտանիքի, մշակույթի և եկեղեցու միջոցով,

- համակողմանի հայտնաբերել և համախմբել Սփյուռքի ներուժը և այն ներգրավել Հայաստանի կենսական խնդիրների լուծմանը,

- մշակել օտար պետություններում բնակվող հայերի հայրենադարձությանը խթանող ծրագրեր, աջակցել հայագորացմանը և հայադարձությանը:

Աշխատանքներ են տարվելու Սփյուռքի մարդկային, մտավոր, ֆինանսական և կազմակերպչական հնարավորությունները հաշվառելու, յուրաքանչյուր համայնքի տվյալների շտեմարան ստեղծելու, համայնքներում զարգացման միտումները հետազոտելու ուղղությամբ:

2010թ մշակվելու և իրականացվելու են համահայկական ծրագրեր՝ Սփյուռքը Հայաստանի հետ առավել սերտացնելու, հայկական անկախ պետականության շուրջ աշխարհասփյուռ հայությանը համախմբելու ուղղությամբ:

Կարևորվելու է նաև Սփյուռքի չկազմակերպված համայնքների կազմակերպումը, փոքր համայնքներում հայկական կյանքի աշխուժացումը, համայնքային կյանքի համակարգումը, կրթական, մշակութային, հոգևոր հաստատությունների ստեղծումը, որոնց կարող են նպաստել հասարակական, քաղաքական, մշակութային ոլորտներից գործիչներ գործուղելու, համայնքերին հայկական կազմակերպությունների հետ կապերն ամրապնդելու միջոցով:

Գործնականում էլ ավելի ընդգրկուն կդարձան Ջավախքի տարածաշրջանում բնակվող հայության սոցիալ-մշակութային և կրթական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը՝ որոնք բովանդակային առումով պետք է բխեն «ինտեգրում՝ առանց ձուլման» սկզբունքից:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը մեծապես կօժանդակի սփյուռքագիտության ոլորտում մասնագետների պատրաստումը, վերապատրաստումը, փորձի փոխանակումը:

Օրակարգային խնդիրների շարքում կնդգրկվեն նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման իրավական հիմքերի կատարելագործման, ոլորտին առընչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացման, սփյուռքահայերի կացության իրավունքի, երկքաղաքացիության, քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ իրավական ակտերի մշակման հարցերը:

Սփյուռքի հայ համայնքներում հայապահպանության, տեղեկատվական ակտիվ համակարգի ձևավորման, ուսուցողական և ճանաչողական առումով մեծ է նաև Սփյուռքում հեռարձակվող հայկական հեռուստածրագրերի դերն ու նշանակությունը, այդ առումով աջակցություն կցուցաբերվի Հայաստան-Սփյուռք գործակցության հիմքում ընկած ամենատարբեր խնդիրների իրագրելման և լուծումների առաջադրման գործին:

Կրթություն

Հայաստանում պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը: 2010թ պահպանվելու է կրթության ոլորտի ծախսային գերակա վիճակը, որպես երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության առաջնային գրավական:

Կրթության ոլորտի հիմնական գերակայություն շարունակելու է համարվել հանրակրթությունը՝ հատկապես տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթությունը՝ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Նախատեսվում է ապահովել տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով, ինչպես նաև 11-րդ դասարանների աշակերտներին՝ 4 ամուն նոր դասագրքերով, փոխհատուցել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարը, ապահովել հատուկ դպրոցներին անվճար ծրագրերով, դասագրքերով, ձեռնարկներով և ուսումնական այլ նյութերով:

Հանրակրթության ոլորտում նախատեսվում է աշակերտ/ուսուցչական դրույք և աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունների պահպանում՝ 14.5 և 24.1, ուսուցման նոր մեթոդների ներդրում, ուսումնական նոր պարագաների տրամադրում:

2010թ նախատեսվում է արտադպրոցական հիմնարկների բովանդակային բարելավում, ըստ հետաքրքրությունների դպրոցականների պահանջարկի բավարարում, լրացուցիչ ծառայությունների ոլորտի ընդլայնում, տարաբնույթ արտադպրոցական և մարզառագմական ծրագրերի և միջոցառումների իրականացում:

Լուծելով հիմնական ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները, պետությունը բավարար հիմքեր է ստեղծում մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկվածության մակարդակների բարձրացման համար, հատուկ ուշադրություն դարձնելով հավասարության խնդիրներին:

Նշված ոլորտում որպես գերակայություն են դիտվում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, Լիսաբոնի կոնվենցիայի պահանջների ապահովումը, Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրման գծով հիմնական ուղղությունների իրականացումը՝ համընթեռնելի և համադրելի բարձրագույն կրթական փաստաթղթերի ներդրումը, որակավորումների ազգային համակարգի ստեղծումը, ՀՀ կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվության պատրաստումը և տրամադրումը շահառուներին:

ՀՀ Ազգային ժողովի 2009թ հուլիսի 10-ի թիվ Ն-153-4 որոշմամբ վավերացված «Կրթության որակի և համապատասխանության» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- ուսանողական վարկերի համակարգի մշակում,
- բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության մշակում:

Կարևորելով մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) դերը՝ Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակներն են՝

- ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը, նրանց կարողությունների և հմտությունների կայացմանն ուղղված համակարգի արդյունավետությունը,
- ՄԿՈՒ որակավորումների համակարգի համապատասխանեցում որակավորումների եվրոպական շրջանակին,
- ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալ ցանցի ձևավորում:

Գիտության ոլորտ

2010թ ոլորտի գերակա խնդիրներն են լինելու՝

- հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրումը,

- գիտության ոլորտի զարգացման ու բնականոն գործունեության ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

- գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրականացումը,

- ինովացիոն քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին մասնակցումը, հիմնարար ու կիրառական գիտության և գիտատեխնիկական արդյունքի ու բարձր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցումը:

2010թ գիտության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակն է գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը, որում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը: Դրա համար առաջնահերթ անհրաժեշտ է.

-ձևավորել գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգ,

-բարձրացնել գիտության ֆինանսավորման արդյունավետությունը,

-իրականացնել գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումներ,

-բարձրացնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը,

-արդիականացնել գիտության ոլորտի ենթակառուցվածքը, նյութատեխնիկական բազան,

-ստեղծել գիտական ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգ,

-հստակեցնել գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունները,

-ապահովել գիտության և կրթության ինտեգրումը,

-ապահովել գիտական ներուժի վերարտադրությունը և երիտասարդացումը,

-նպաստել գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դուրս բերմանը ներքին և արտաքին շուկա:

ՀՀ 2010թ պետական բյուջեի նախագծում նախատեսվել է՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում ակադեմիական տիպի գիտական կազմակերպություններում միավորվել են հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ու գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը՝ որպես ընդհանուր ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրեր:

ՀՀ 2010թ պետական բյուջեի նախագծի գիտության մասով ընդգրկված ծրագրերը միտված կլինեն գիտության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, գիտական հետազոտությունների զարգացմանը, գիտական ներուժի երիտասարդացմանը, գիտահրատարակչական գործունեության արդիականացմանը և գիտական ու գիտատեխնիկական բնագավառում միջազգային համագործակցության խթանմանը:

Առողջապահություն

Ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են լինելու համակարգի կազմակերպական ու կառուցվածքային վերափոխումներին, օրենսդրական դաշտի բարելավմանը, առողջապահության ֆինանսավորման համակարգի կատարելագործմանը, արտաքին ու ներքին կապիտալի ներհոսքին առողջապահության ոլորտ, բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը:

Բուժօգնության համակարգի զարգացումը շարունակաբար ուղղված է լինելու նրա մատչելիության, որակի բարելավման, կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործմանը, մասնավորապես՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն) իրականացմամբ, բուժօգնության ստանդարտների աստիճանական ներդրմանը, որակի բարելավմանը և վերահսկմանը, բուժօգնության տարբեր օղակների միջև փոխկապակցվածության աստիճանի բարձրացմանը:

Շարունակվելու է ընտանեկան բժշկության համակարգի ներդրման գործընթացը, որն աստիճանաբար կփոխարինի գոյություն ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համակարգին:

Բնակչության անապահով խավի համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և աղքատության հաղթահարման համատեքստում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա:

Հատուկ ուշադրություն է դարձվելու մարզային և գյուղական մակարդակում բուժօգնության դերի ամրապնդմանն ու գործունեության բարելավմանը, ինչպես նաև գյուղական ազգաբնակչության առողջության առաջնային պահպանմանը, բժշկական ծառայությունների մատչելիության և դրանց որակի բարձրացման ապահովմանը:

Անհրաժեշտ է 2010թ վերահաստատել կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունն ազգային մակարդակով՝ ապահովելով նրանց առողջության բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շարունակական իրագործումը, այդ թվում՝ կրճքով սնուցման խրախուսումը, հղիների նախածննդյան խնամքի և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրումը:

Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականության հիմնական ուղղվածությունը լինելու է դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև ավելի արդիական ու արդյունավետ դեղերով ապահովումը: Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով (տուբերկուլյոզ, հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ և այլն) տառապող հիվանդների դեղորայքով անխափան և շարունակական ապահովման համար նախատեսվում է համապատասխան դեղամիջոցների ձեռքբերում կենտրոնացված միջոցների հաշվին, որոնք կարիքավորներին կտրամադրվեն պոլիկլինիկաների (դիսպանսերների պոլիկլինիկական բաժանմունքների) միջոցով և նրանց հսկողության ներքո:

Բժշկական կրթության, գիտության և կադրային բնագավառում վարվող քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու կադրային ներուժի օպտիմալացումը, բժշկական մասնագիտական կադրերով հանրապետության ողջ տարածքում համաչափ հագեցվածության ապահովումը, բժշկական կրթության կառուցվածքի և ստանդարտների մոտեցումը միջազգային չափանիշներին, բժշկագիտության ներուժի արդյունավետ կիրառման համար պայմանների ստեղծումը:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

Պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, ՀՀ կառավարությունը թեև անցավ խնայողությունների ռեժիմի, այնուհանդերձ, այն շտաբաժվեց բնակչության սոցիալական պաշտպանությանն ուղղված հիմնական ծրագրերի վրա: Ելնելով երկրի տնտեսական զարգացման միտումներից և պետության տրամադրության տակ գտնվող ֆինանսական ռեսուրսներից՝ 2010թ կշարունակվի բնակչության բարեկեցության աճին և աղքատության հաղթահարմանը, ներառյալ՝ ծայրահեղ աղքատության վերացմանն ուղղված քաղաքականությունը:

Սոցիալական պաշտպանության ոլորտում 2010թ պետական քաղաքականությունը նպատակաուղղված կլինի հաշմանդամների, տարեցների, կանանց ու երեխաների հիմնահարցերի լուծման, ինչպես նաև բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման, արժանապատիվ աշխատանքի դիմաց համարժեք վարձատրության, աշխատանքով պայմանավորված եկամուտների ավելացման, սոցիալական իրավունքի լիարժեք իրացման պայմանների ստեղծման, սոցիալական աջակցության հասցեականության, կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովմանը: Քայլեր կձեռնարկվեն սոցիալական պաշտպանության ծրագրերի միջոցով ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ: Կշարունակվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով սոցիալական պաշտպանության համակարգը առավել համահունչ դարձնել եվրոկառույցների ամրագրած հիմնարար սկզբունքներին:

Սոցիալական աջակցության բնագավառում շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների, մասնավորապես՝ ընտանեկան նպաստի հասցեականության բարձրացման հարցը: Շարունակվելու է նախատեսված ֆինանսական միջոցների ուղղման առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին: Հասցեականության մեծացմանն ուղղված միջոցառումները (2008-2009թթ) հնարավոր դարձրին ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թվի պահպանման պայմաններում համակարգում ընդգրկել նոր՝ տնտեսական ճգնաժամի հետևանքով ընտանեկան նպաստի կարիք ունեցող ընտանիքների: 2010թ ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կմնա անփոփոխ՝ 2009թ համեմատությամբ:

2010թ երեխայի խնամքի ու երեխայի ծննդյան միանվագ նպաստի բնագավառում քաղաքականությունը կմնա նույնը:

Չբաղվածության բնագավառում հաշվի առնելով Հայաստանի տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը և դրա հետևանքով պետական բյուջեի ընթացիկ և կանխատեսվող հնարավորությունները՝ 2010թ միայն գործազրկության նպաստի գծով է նախատեսվում բյուջետային ֆինանսավորման ավելացում:

Աշխատանքային իրավահարաբերությունների և աշխատավարձի քաղաքականության բնագավառում առաջնահերթ օրենսդրական կարգավորման ենթակա հիմնախնդիրների լուծման նպատակով կշարունակվի նորմատիվ իրավական ակտերի մշակումը և կատարելագործումը:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում նախատեսվում են իրականացնել աշխատանքներ ուղղված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության, հաստատություններում նրանց խնամքի, դաստիարակության, ուսման և ֆիզիկական զարգացման նպատակով նպաստավոր պայմանների ստեղծմանը: Նախատեսվում են նաև իրականացնել միջոցառումներ «Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ Ազգային ծրագրի» շրջանակներում:

Շարունակվելու է թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման ծրագիրը:

ՀՀ կառավարության կողմից գեներային քաղաքականության մասին հայեցակարգի ընդունումից հետո կիրականացվեն փաստաթղթով նախատեսված միջոցառումները:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում 2010թ առաջնահերթ կլինեն հաշմանդամների և տարեցների սոցիալական վիճակի ու կյանքի որակի բարելավմանը, իրավունքների պաշտպանությանը, հաշմանդամներին հասարակություն ինտեգրմանը, նրանց համար հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, նրանց բժշկական, սոցիալական, մասնագիտական և հոգեբանական վերականգնմանը ուղղված միջոցառումներ, ինչպես նաև տարեցների և հաշմանդամների հիմնահարցերին հասարակության իրազեկման բարձրացմանն ուղղված հարցերը:

Շարունակվելու են հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ օգնության տրամադրման և վերականգնողական պարագաներով ապահովման աշխատանքները:

Իրականացվելու են աշխատանքներ միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպման ուղղությամբ՝ շուրջօրյա խնամքի հաստատություններում, խնամքի ցերեկային կենտրոններում և տնային պայմաններում:

Իրականացվելու են ծրագրեր ուղղված անօթևան մարդկանց սոցիալական աջակցության տրամադրմանը, բռնադատվածների և առաջին հերթի ժառանգների բնակարանային պայմանների բարելավմանը, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի վետերանների, զինհաշմանդամների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության հիմնահարցերի լուծմանը:

ՀՀ կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության գործունեության գերակա ուղղություն: 2010թ կառավարությունը կհաստատի կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերն ու կշարունակի քայլեր ձեռնարկել բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումն ու բնականոն գործունեությունը ապահովող ենթակառուցվածքների ձևավորման և կատարելագործման ուղղությամբ:

Համապատասխան քայլեր կձեռնարկվեն նաև սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական բազաները կատարելագործելու, էլեկտրոնային տեղեկատվության հիման վրա շահառուներին սպասարկելու կառուցակարգեր սահմանելու, տեղեկատվության ինքնաշխատ փոխա-

նակությունն ապահովող համակարգչային ծրագրեր և մեխանիզմներ մշակելու և ներդնելու ուղղությամբ:

Ժողովրդագրական քաղաքականությունը նպատակաուղղված կլինի ծնունդների խրախուսմանը, կյանքի սպասվող տևողության մեծացմանը, արտագաղթի ծավալների նվազեցմանը ու ներգաղթի խթանմանը, բնակչության ծերացման հետևանքների հաղթահարմանը, բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության բարելավմանը, ընդհանուր կրթության, բնակչության գիտելիքների, սեռական և վերարտադրողական մշակույթի մակարդակի բարձրացմանը, սոցիալական բոլոր խմբերի համար առողջ վերարտադրողական կյանքի հավասար հնարավորությունների ապահովմանը, բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության սահմանափակմանը:

Մշակույթի ոլորտ

2010թ մշակույթի ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են հանդիսանալու.

-մշակութային ժառանգության (հուշարձաններ, մշակութային արժեքներ, ոչ նյութական մշակույթ) պահպանության հիմքերի ապահովումը,

-ժամանակակից արվեստի զարգացումը,

-մշակույթի ոլորտի կադրերի ձևավորման և գեղարվեստական կրթության ծրագրերի իրականացումը,

-հայ մշակույթի հանրահռչակումը,

-մշակութային ծառայությունների մատչելիության ապահովումը,

-մշակույթի համաչափ զարգացումը,

-միջազգային համագործակցության զարգացումը:

ՀՀ մշակութային կյանքի 2010-2012 թվականների խոշորագույն իրադարձություններից մեկը Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակի նշումն է, որի շրջանակներում 2010թ կիրականացվեն հանրությանը հայկական գրավոր մշակույթի ներկայացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Բնակչության համար մշակութային արժեքների, մշակութային արտադրանքի ֆիզիկական մատչելիության ապահովման նպատակով նախատեսվում է գրադարանային հավաքածուների նորացում, թարմացում՝ շահառուների պահանջարկին և գիտատեխնիկական զարգացումների գործընթացներին համապատասխան, ինչպես նաև ընթերցանության համար հարմարավետ պայմանների ստեղծում, արդիական տեխնիկական սարքավորումների հագեցվածություն, տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրում ու կիրառում:

Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման և մշակութային համագործակցության խորացման նպատակով շարունակվելու է գաղթօջախների և այնտեղ գործող կազմակերպությունների և մշակութային միությունների հետ համագործակցության ծրագրեր և հուշագրեր ստորագրելու ու իրականացնելու պրակտիկան, խրախուսվելու ու սատարվելու են հայրենիքում և արտերկրում գործող հայ արվեստագետները՝ կազմակերպելով սփյուռքահայ արվեստագետների հորելյաններ, աջակցելով Սփյուռքում գործող պարային և թատերախմբերի հյուրախաղերին, նկարիչների ցուցահանդեսներին, գրողների և գրահրատարակիչների համաժողովներին և այլն:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվելու է օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովման, ՀՀ գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար կազմի սոցիալական վիճակի բարելավման, նրանց վերապատրաստման, ֆիզկուլտուրային-առողջարարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացման, հաշմանդամային սպորտին, մարզական-հասարակական կազմակերպություններին պետական աջակցության, մարզադպրոցներին անհրաժեշտ մարզագույքով ապահովման միջոցով:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում 2010թ գերակա խնդիրներն են՝

-բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացմանն, աշխատունակության ու երկարակեցության ապահովմանն ուղղված պայմանների ստեղծումը, տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունն ու ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիության ապահովումը,

-հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական և հոգևոր պատրաստվածության դաստիարակությանը նպաստելը,

-բարձրակարգ մարզիկների պատրաստման, օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում և այլ միջազգային մրցահարթակներում ՀՀ հավաքական թիմերի ու մարզիկների արդյունավետ մասնակցության ապահովումը,

-երիտասարդների կենսապայմանների բարելավումը, նրանց հանգստի կազմակերպումը և նրանց մասնակցության աստիճանի բարձրացումը հասարակական, քաղաքական զարգացումներին,

-ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպումը, Եվրախորհրդի ծրագրերի, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերի հետ ծանոթացնելու նպատակով միջոցառումների անցկացումը:

Երիտասարդական ոլորտում 2010թ իրականացվող քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում), բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել՝ զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երի-

տասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու և նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

2010 թվականին նախատեսվող սպորտի ոլորտի պետական քաղաքականության ուշադրությունը բևեռվելու է Հայաստանի Հանրապետության ազգային մարզական ֆեդերացիաների և մանկապատանեկան մարզադպրոցների աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, հաշմանդամային սպորտի մասսայականացմանը, մանկապատանեկան մարզադպրոցներում միջոցառումների քանակի ավելացմանը, մանկապատանեկան դպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպմանը:

Բնապահպանության ոլորտ

Բնապահպանության ոլորտում 2010թ կառավարության կարևորագույն և գերակա խնդիրներն են լինելու.

- երկրում բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,
- հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը,
- բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,
- ընդերքի և հողերի պահպանության ապահովումը,
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը, ՀՀ ջրի ազգային ծրագրի ամբողջական իրականացումը,
- շրջակա միջավայրի վիճակի դիտարկումների և ուսումնասիրությունների ապահովումը,
- շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը,
- բնապահպանական կառավարման բնագավառում վարչարարության կատարելագործման նպատակով մասնավոր և հանրային սեկտորների համագործակցության մեխանիզմների զարգացման և ներդրման գործընթացների ապահովումը, բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը և միջազգային կոնվենցիաներով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բարեփոխումները բյուջեների կազմման բնագավառում

2010 թվականին հետևողականորեն շարունակվելու են բարեփոխումները բյուջեների կազմման բնագավառում՝ ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման ուղղությամբ:

Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում 2010թ նախատեսվում են իրականացնել միջոցառումներ հետևյալ ուղղություններով.

- գործող հարկային օրենսդրության հիման վրա, օրենսդրության կատարելագործման, վարչարարական գործիքների ուժեղացման միջոցով կշարունակվեն միջոցներ ձեռնարկվել տնտեսության մեջ փաստաթղթաշրջանառության ամբողջական շղթայի վերականգնման ուղղությամբ՝ սկսած ապրանքների ներմուծումից, արտադրությունից մինչև դրանց վերջնական սպառումը:

- կշարունակվեն հարկման այլընտրանքային համակարգերից (ծխախոտի, բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարներից) հարկման ընդհանուր համակարգին աստիճանական անցմանը, հարկային բեռի հավասարաչափ ու արդարացի բաշխմանը ուղղված աշխատանքները:

- կկրճատվեն հարկային մարմիններ ներկայացվող հաշվետվությունները՝ քանակի, բովանդակության միասնականացման և պարբերականության վերանայման միջոցով:

- աշխատանքներ կիրականացվեն հարկային պարտավորություններից ավել վճարված գումարների՝ պետական բյուջեից հետ վերադարձման մեխանիզմների կատարելագործման, նոր գերավճարների և ապառքների առաջացման կանխարգելման, ինչպես նաև հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ինքնագնահատման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:

Կշարունակվեն մաքսային օրենսդրության, դրանց պահանջների կատարման նկատմամբ հսկողության ընդլայնմանը, մաքսային ընթացակարգերի պարզեցման, մաքսային համակարգում ինքնահայտարարագրման մեխանիզմի կիրառման ընդլայնմանը, մաքսատների կարողությունների զարգացմանը, մաքսային հսկողության կատարելագործմանը, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտ-մաքսային ծառայող և տնտեսավարող սուբյեկտ-հարկային ծառայող շփումների կրճատմանն ուղղված աշխատանքները: Այդ շրջանակներում կիրականացվեն հետևյալ քայլերը.

- կներդրվի էլեկտրոնային եղանակով հարկային մարմիններ հաշվետվություններ ներկայացնելու ամբողջական համակարգ՝ կրճատելով առձեռն ներկայացվող հաշվետվությունների քանակը,

- ամբողջապես կգործարկվի հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը՝ ապահովելով հարկ վճարողների կողմից հարկման բազաների և հարկվող օբյեկտների իրական ծավալների ամբողջական բացահայտումը և դրանց համապատասխան ծավալներով ու օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկային պարտավորությունների կատարումը,

- կընդլայնվեն ինքնահայտարարագրման համակարգի և մաքսային միջնորդի ինստիտուտի գործարկման շրջանակները,

- կավարտվեն մաքսային համակարգում էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրման աշխատանքները,

- կակտիվացվեն փոխհարաբերությունները այլ երկրների հարկային և մաքսային մարմինների հետ՝ տնտեսական իմաստով առավել հետաքրքրություն ներկայացնող համապատասխան միջազգային համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք միջազգային հարկային հարաբերություններում հնարավորություն կընձեռեն ապահովելու ինչպես տեղեկատվության արդյունավետ փոխանակումն, այնպես էլ հսկողական աշխատանքների համար արժանահավատ տեղեկատվության ապահովումը,

- կուսումնասիրվի միջազգային լավագույն փորձը և դրա հիման վրա վերջնականորեն կներդրվեն ռիսկերի վրա հիմնված հարկային և մաքսային հսկողության համակարգերն, որն էլ իր հերթին հնարավորություն կտա անհարկի չմիջամտել բարեխիղճ տնտեսավարողների գործունեությանը և ընդհակառակն՝ առավել խիստ վերաբերմունք դրսևորել օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ,

- միջազգային լավագույն փորձի հիման վրա կընդլայնվեն հետբացթողումային հսկողության կարողություններն, որը հնարավորություն կտա մի կողմից շարունակել մաքսային ընթացակարգերի պարզեցման աշխատանքները և մյուս կողմից բարձրացնել մաքսային վճարների հավաքագրման աստիճանը:

Կշարունակվի սպասարկման ռազմավարության ներքո հարկ վճարողներին (արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին) մատուցվող ծառայությունների, սպասարկման որակի բարձրացումը՝ հարկ վճարողների սպասարկման կենտրոնների և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների համար միասնական խորհրդատվական կենտրոնի ստեղծման միջոցով:

Կշարունակվեն աշխատանքները Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության մաքսային սահմանում միասնական մաքսային կետի ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Կշարունակվեն հարկային և մաքսային օրենսդրությունների ու ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ աշխատանքները՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Հարկային և մաքսային օրենսդրությունների և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, հարկ վճարողներին գործող հարկերի և պարտադիր այլ վճարների մասին տեղեկացման նոր մեխանիզմների հիման վրա կընդլայնվեն և կբարելավվեն դրանց որակն ու ծավալը՝ ձևավորելով թույլ տրվող սխալների, հաճախ հանդիպող հարցերի և դրանց պատասխանների «գիտելիքների շտեմարանի» տվյալների բազա:

Կներդրվի հարկ վճարողներին ծանուցումների ուղարկման համակարգչային ավտոմատ ամբողջական համակարգ, կշարունակվի մաքսային հայտարարագրերի ավտոմատ մշակման և ընդունման համակարգի զարգացումը, որի նպատակով գործարկվելու են տվյալների մշակման և հարկ վճարողների սպասարկման արդիականացված մի քանի ռեգիոնալ կենտրոններ:

Հարկային և մաքսային մարմիններում նոր գործառույթների հիման վրա կստեղծվեն պաշտոնների համապատասխան նկարագրեր՝ հարկային և մաքսային ծառայողների կատարողականների գնահատմամբ առաջխաղացման նոր մեխանիզմների ներդրման և վարչարարության արդյունավետության բարձրացման նպատակով:

Կիրականացվեն զգալի աշխատանքներ մաքսային համակարգում ՀՀ մաքսային տարածք մուտք գործող և տարանցիկ մաքսային ռեժիմով տեղաշարժվող տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողության իրականացման համակարգի ներդրման ուղղությամբ:

Միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում զգալի աշխատանքներ են նախատեսվում իրականացնել սահմանների միասնական կառավարման ուղղությամբ, մասնավորապես մաքսային մարմինների և սահմանային հսկողություն իրականացնող այլ գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի ներդրման ուղղությամբ:

Խոշոր տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային և մաքսային պարտավորությունների ճիշտ և ժամանակին կատարման նպատակով կշարունակվեն իրականացվել աշխատանք-

ներ, որոնք ապահովելով պետական եկամուտների հավաքագրման կայությունն ու համաչափությունը ի վերջո հանգեցնելու են եկամուտների աճին:

Կիրականացվեն լայնածավալ աշխատանքներ հարկային և մաքսային իրավախախտումների, մասնավորապես՝ հարկերի վճարումից խուսափելու, մաքսանենգության, մաքսային կանոնների խախտումների, առանց ապրանքների մատակարարման հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման դեպքերի բացահայտման և պատասխանատվության միջոցների լիարժեք ու հետևողական կիրառման ուղղությամբ: Օրենսդրական նոր հիմքի վրա հարկային մարմինները կկիրառեն չափազրույմների գործիքը հարկերը թաքցնող տնտեսավարողների իրական հարկային պարտավորությունները վերահաշվարկելու նպատակով, իսկ մաքսային մարմինների կողմից առավել խիստ պատասխանատվության կենթարկվեն մաքսանենգություն իրականացնողները:

Պետական եկամուտների վարչարարության նոր մշակույթի ձևավորման շրջանակներում կձեռնարկվեն քայլեր արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների և ընդհանրապես բոլոր հարկատու սուբյեկտների սպասարկման, իրազեկման և հարկերի վճարման ոլորտներում էական բարեփոխումների ապահովման ուղղությամբ:

Պետական եկամուտների հավաքագրման բնագավառում առանձնահատուկ տեղ է հատկացվելու հարկային և մաքսային մարմինների տեխնիկական վերազինման աշխատանքներին: Մասնավորապես.

- նախատեսվում է բոլոր մաքսային պահեստներում և մաքսային կետերում ստեղծել բեռնարկային հրապարակներ, տեղադրել տրանսպորտային միջոցները զննող սկաներներ և այլ նմանաբնույթ սարքավորումներ,

- նախատեսվում է հարկային հսկողական աշխատանքներում ստուգաչափող գործիքների, օպերատիվ հետախուզական գործունեության համար սարքավորումների անհրաժեշտ քանակով ապահովում:

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից ծրագրվում է վերադաս մաքսային մարմնում ներդնել տարածքային մաքսային մարմնի աշխատանքները տեսանելի դարձնող էլեկտրոնային համակարգեր, որի միջոցով հսկողություն կսահմանվի տեղերում մաքսային գործընթացների նկատմամբ:

Պետական գույքի կառավարում

Պետական գույքի մասնավորեցման ոլորտում 2010թ նախատեսվում է.

- պետական գույքի մասնավորեցման ձևերից առավելագույնս կիրառել հրապարակային սակարկություններով մասնավորեցումը,

- մրցույթով, ուղղակի վաճառքով մասնավորեցման ներկայացնելիս ուշադրությունը կենտրոնացնել իրականացվելիք ներդրումային ծրագրերի հիմնավորվածությանը և սոցիալական երաշխիքների ապահովվածությանը:

Պետական գույքի կառավարման ոլորտում նախատեսվում է.

- կատարելագործել պետական գույքի գնահատման, պետական գույքի վարձակալության, հանձնման և պետական գույքի հաշվառման գործընթացները,

- պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում իրականացնել պետական բաժնեմասի արդյունավետ կառավարման համալիր միջոցառումներ,

Անշարժ գույքի կադաստր

Ոլորտում 2010թ իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդյունավետ կառավարման ապահովման նպատակով կիրականացվեն անշարժ գույքի ու նրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքների մատչելիությանն ու հասանելիությանը, մատուցվող ծառայությունների էլեկտրոնայնացմանն ուղղված աշխատանքներ: Աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն կրճատել անշարժ գույքի ու նրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության (ինչպես տարածական, այնպես էլ իրավական) տրամադրման համար օգտվողների կողմից ծախսվող ժամանակը:

- գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով՝ կշարունակվեն պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրային) թվային ֆոնդի ստեղծման և թարմացման աշխատանքները՝ հիմնված նորագույն՝ արբանյակային, օդային և վերգետնյա հանութային տեխնոլոգիաների վրա, ինչպես նաև արբանյակային տեխնոլոգիաների հիման վրա պետական գեոդեզիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացման, բազային երկրատեղեկատվական համակարգի ներդրման, աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման ավտոմատացված համակարգի վարման, հիմնարար քարտեզագրական ստեղծագործությունների ստեղծման աշխատանքները: Միաժամանակ, կներդրվի նաև մեկ քարտեզագրական (հանութային) հիմքը որպես բազային՝ սկզբունք: Այս սկզբունքի ներդրումը կնպաստի պետության կողմից ծախսվող միջոցների էական տնտեսմանը գեոդեզիայի և քարտեզագրության, բնապահպանության, բնօգտագործման, հիդրոօդերևութաբանության, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխատեսման, բնական միջավայրի տիեզերական մոնիթորինգի, հիմնարար գիտական տիեզերական հետազոտությունների և այլ ոլորտներում:

Հաշվի առնելով տիեզերական գիտության նշանակությունը ՀՀ սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացման համար 2010թ կարևորվելու է ՀՀ-ում տիեզերական դիտարկումների կենտրոնի ստեղծումը:

Տիեզերական դիտարկումների կենտրոնի կողմից մշակված տվյալները կօգտագործվեն գեոդեզիայի և քարտեզագրության խնդիրների լուծման, նավիգացիայի ապահովման, բնապահպանության, բնօգտագործման, հիդրոօդերևութաբանության, տարերային և տեխնոլոգիական աղետների բնական միջավայրի վերահսկողության տիեզերական մոնիթորինգի, հիմնարար գիտական տիեզերական հետազոտությունների համար:

Ձգալի ուշադրության կարժանացվի թեմատիկ քարտեզագրության, ուսումնական և պատմական այլ քարտեզների ու ատլասների ստեղծման աշխատանքները: Աշխատանքներ կիրականացվեն հանրապետության պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնտեսության տարբեր ճյուղերին, ինչպես նաև գիտության, կրթության, պաշտպանության և

այլ բնագավառներին հայերեն լեզվով ստեղծված ժամանակակից պահանջներին համապատասխանող քարտեզագրական նյութերով ապահովման ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվելու հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային նոր բաժանման, պետական ֆոնդի հողերի վերաբաշխման կազմակերպման համար, աջակցություն կցուցաբերվի հողի շուկայի ձևավորմանը:

Կարևորվելու է շուկայական մեխանիզմների վրա հիմնված՝ հարկման նպատակով գնահատման նոր համակարգի ներդրումը և անշարժ գույքի միասնական հարկին անցման աշխատանքների իրականացումը, անշարժ գույքի շուկայի իրավիճակի փոփոխությունների բացահայտումը և կադաստրային գնահատման կարգերի կատարելագործումը:

Անշարժ գույքի շուկայական մեթոդների վրա հիմնված միասնական գնահատման կարգերի մշակման նպատակով նախատեսվում է պարբերաբար իրականացնել համակարգված դիտարկումներ, որի հիմնական խնդիրն է անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովումը, անշարժ գույքի կադաստրային գնահատման կարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը՝ հողամասերի և շենքերի ու շինությունների միասնական գոտիների սահմանների նկարագրում, տարածագնահատման միասնական գոտիականության գործակիցների և բազային արժեքների դուրս բերում, ինչպես նաև անշարժ գույքի կադաստրային միասնական գնահատման բանաձևերի մշակման և հետագա կատարելագործման առաջարկությունների ներկայացում:

Անշարժ գույքի շուկայի համաչափ զարգացման համար կկարևորվի անշարժ գույքի պահանջարկի և առաջարկի գնահատումը, դրանց առանձնահատկությունները: Աշխատանքներ կիրականացվեն նաև անշարժ և շարժական գույքի գրավի, ֆինանսական վարձակալության (լիզինգի) գրանցման մեխանիզմների պարզեցման ուղղությամբ:

Պետական վիճակագրություն

Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով, 2010թ մասնավորապես նախատեսվում է.

- վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում՝ շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները, հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,

- վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ շարունակել և ընդլայնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը (հատկապես, որ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 2008թ ապրիլի 29-ի կազմակերպական նստաշրջանում՝ Նյու-Յորք, Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի նոր անդամ 2009թ հունվարի 1-ից 4 տարի ժամկետով),

- վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով՝ շարունակել վիճակագրության ոլորտում միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից սահմանված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), ինչը ենթադրում է նաև տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

- վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց՝ շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները, միաժամանակ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև հնարավորինս նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը,

- համալրել, արդիականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեզիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,

- շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողմնորոշման միասնական համակարգի մասը կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (այդ թվում՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգչի, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգչի, վիճակագրական միավորների դասակարգչի և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները (այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),

- անցում կատարել վարչական ռեզիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը, հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

- տեղական (համայնքային) վարչական ռեզիստրների (այդ թվում՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց, կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

- շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

- ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով՝ միջոցառումներ իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,

- շարունակել երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների գծով վիճակագրական տեղեկատվություն պարունակող, ինչպես նաև ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) թողարկումը, ինչպես նաև ընդլայնել դրանց կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով,

- կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

Հասարակական կարգի պահպանություն

2010թ ոլորտում շարունակվելու է բարեփոխումները հասարակական կարգի պահպանման, հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության, գործունեության թափանցիկության ապահովման, բնակչության մոտ վստահության ամրապնդման ուղղությամբ:

2010թ իրականացվելու են ոստիկանության տարբեր ծառայությունների (ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի, տարածքային ստորաբաժանումների, անձնագրերի և վիզաների վարչության, ճանապարհային ոստիկանության և այլն) կողմից շահագործվող տվյալների բազաների ինտեգրման և մեկ ցանցային միջավայրում շահագործման ապահովման, հանցագործություն կատարած անձանց օպերատիվ տեղեկատու քարտադարանի ավտոմատացման աշխատանքները, որոնք ավարտելուց հետո հնարավորություն կընձեռվի սկսել իրավապահ մյուս մարմինների և շահագրգիռ այլ գերատեսչությունների տվյալների բազաները մեկ միջավայրում ինտեգրելու և միասնական տեղեկատվական համակարգ ստեղծելու գործընթացը:

Ոստիկանության ստորաբաժանումների կարողությունները անհրաժեշտ տեղեկատվության (ներառյալ տեղում ճիշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ տեղեկատվության) արագ և անկորուստ փոխանակելու առումով կատարելագործելու նպատակով 2010 թվականին և հետագա միջնաժամկետ հատվածում շարունակվելու է ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխանող ռադիոկապի համակարգի ներդրման ընթացիկ տարում սկսված գործընթացը:

Շարունակվելու են բնակչության պետական ռեզիստրի համակարգի կատարելագործմանը նպատակաուղղված աշխատանքները: Գործունեության այս բանազավառում նախատեսվում է ներդնել անհատական տվյալների անձեռնամխելիությունն ապահովող համապատասխան իրավական նորմեր:

Նախատեսվում է 2010թ ներդնել միջազգային չափանիշներին համապատասխանող ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգը:

Ճանապարհային ոստիկանության բարեփոխումների ծրագրով նախատեսվում է միջնաժամկետ հեռանկարում հիմնովին վերազինել ծառայությունը, բարձրացնել ինչպես ծառայություն կատարող վերակարգերի, այնպես էլ հաշվառման-քննական ստորաբաժանումների գործունեութ-

յան արդյունավետությունը: Այդ նպատակով 2010թ կմեկնարկեն հանրապետության խոշոր քաղաքների խաչմերուկներում և մայրուղիներում տեսադիտման և արագաչափ ավտոմատ սարքերի տեղադրման, ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի գործարկման աշխատանքները:

Ոստիկանության համակարգում 2010թ նախատեսվում է քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի ներդրումը: Դրանով նախադրյալներ կստեղծվի ոստիկանությունում քաղաքացիական վերահսկողության իրականացման, գործունեության թափանցիկության բարելավման առումով: